Թանձր արիւնէ ծով է կապեր.
Ի մ(ար)դկ(ա)նէ մեղքն որ ծնան,
Ցանկացողացն անքուն որդունքն.
Ո(ր)պ(էս) ձկունք ի ներս լողան:

Անչէջ խաւարն դառնագոյն.
Ի անանց տանջանքն որ մորմքան,
Տոչորին անչէջ հրով.
Բայց ժամ(ա)ն(ա)կն է անվաղճան:

Լերանց նման լինին կուտոց.
Չէտ հիւանդի եծունն գան,
Ի բազմութե(ան) թանձրանալոյն.
Ծովն յարենէ ալեօք ծփան:

Կան առասպել եւ ահաւոր.
Զար առամունքն որ կափկափման,
Ք(ա)ն զանջատելն ի ստեղծմանէ.
Ի Քեռինոս կղզինն իջան:

Անքուն որդունքն անդընդային.
Ցարեան ծովու մէջն լեղան,
Ոչ ս(ա)տ(անա)յէ սնուցեր
Ք(ա)ն յիշատակ յետեւ անցման:

Աչքն է որդան զլ(ու)խն օձու.
Ն(ո)ց(ա) թեւերն ո(ր)պ(էս) ձկան,
Եւ միւս զլ(ու)խն է առիւծոյ.
Որ պ(ա)տ(ա)ռէ ք(ա)ն զչար դաղան:

Կայ հրեղէն չար վիշապունք.
Ի բերանոցըն հուր շընչան,
Զար առամունքն է դաղանի.
Աչքն ի յամպոյ փայլակ նման:

Բերին զդ(ա)սք մեղ(ա)ւ(ո)ր(ա)ցն.
Արեան ծովուն մերձ յանդիման,
Թնդան որթդունքն անդընդային.
Եւ ելանեն մօր յերեւան: